



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՄԱՐՏ, 2023

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ (միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 23 ՏԵՐՆ Է ՀՈՎԻԻՍ

**Տ**էրն է հովիւս,  
ուստի ռեւէ բանի կարօտ պիտի չմնամ:  
Զիս դալար արօտավայրերու մէջ կը պտրտցնէ,  
հանդարտ ջուրերուն քով ինձի կ'առաջնորդէ:  
Հոգիս կը վերանորոգէ,  
արդարութեան ճամբաներէն կ'առաջնորդէ ինձի,  
որպէսզի իր անունը փառաւորուի:  
Նոյնիսկ մահուան շուքին ձորերէն անցնիմ,  
չարէն չեմ վախնար, որովհետեւ Դուն ինձի հետ ես:  
Քանի ցուպդ զիս կ'առաջնորդէ եւ գաւազանդ կը պաշտպանէ,  
ես ինքզինքս ապահով կը զգամ:  
Ինձի խնճոյքի սեղան կը պարարաստես  
թշնամիներուս աչքին առջեւ.  
Իբրեւ պարիս՝ անուշահոտ իւղով կ'օծես գլուխս,  
եւ բաժակս մինչեւ բերան կը լեցնես:  
Տէր, վարահ եմ, որ բարութիւնդ եւ շնորհքդ  
անպակաս պիտի ըլլան վրայեւ՝  
որպէզի կեանքիս ամբողջ փետողութեամբ  
փաճարիդ մէջ բնակիմ:

### ՇՈՒՄՆԱՆ ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ էն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ էն արարածոց եւ ինձ բազմամեղիս:



**ՏԷՐՆ Է ՀՈՎԻԻՄ**

Նախորդ Սաղմոսներուն նման, այս Սաղմոսն ալ, իբրև աղօթք, ներքին հոգեվիճակի մը դրսևորումն է, արքայապարտիւնն է: Եթէ կարելի է ըսել, բոլորիս ծանօթ, յաճախ անգիր, գոց ըսելու չափ, սրբի մօտիկ, իւրաքանչիւրին սրբէն բղխող նաեւ Սաղմոս է: Աշխարհի փրկանքին մէջ եղող ապրող մարդուն, ան ալ Աստուծոյ հետ մտերմիկ կապ ունեցող մարդուն աղօթքն է: Սաղմոս, որուն մէջ յոյսի, ապահովութեան եւ առաջնորդութեան Սաղմոս է: Սաղմոս, որ ժամանակակից է, ինչպիսի դարաշրջանի մէջ ալ ապրի մարդը: Ինչպիսի պայմաններու մէջ ալ ըլլայ: Միւս կողմէ, Աստուծոյ հոգաբարութիւնը, Անոր սէրը յայտնող Սաղմոս է մարդուն նկատմամբ:

Նախորդ Սաղմոսներուն նման, այս Սաղմոսն ալ Դաւիթի կողմէ գրուած Սաղմոս է: Դաւիթ, որ իբրև հովիւ, իր հօրը աշխարհները կ'արածէր: Ահա այդ անձնական կեանքի փորձառութեան լոյսին փակ, ինքզինք ապահով կը զգայ Աստուծոյ պաշտպանութեան փակ: Այնպէս ինչպէս ինք իր կապը, իր հոգաբարութեան հանդէպ իր ոչխարներուն, նոյնպէս ալ Աստուծոյ հոգաբարութիւնը հանդէպ իրեն: Այս Սաղմոսը կու գայ սորվեցնելու, եւ կամ յիշեցնելու մեզմէ իւրաքանչիւրին, Աստուծոյ դերին եւ կապին մասին: Երբ ունինք այդ կապը, իբրև ինչպիսին կը փեսնենք եւ կամ կ'ընդունինք զԱստուծ: Յաճախ երբ կ'աղօթենք, որոշ դերանուններ կ'օգտագործենք, «Տէր իմ», «Ով իմ Աստուածս», «Ով Հայր», որքանով կրնանք արքայապարտիւ «Ով իմ հովիւս» ըսել: Բայց այդ արքայապարտիւնը կրնանք ունենալ, երբ այդ փորձառութիւնը ունեցած ենք: Որովհետեւ, կեանքի մը փորձառութեան լոյսի փակ, մեր ներաշխարհին զգացումները ու այդ փորձառութիւնները կ'արքայապարտենք յապուկ բառերով: Օրինակ, Պետրոս Առաքեալ, երբ կ'արքայապարտի ըսելով. «Զգոյշ եղէք, չարը առիծի մը պէս կը մռնչէ»: Ուրկէ գիպէ չարին առիծի պէս ըլլալը, եթէ ոչ, այն փորձառութիւնը որ ինք ունեցաւ, երբ ուրացաւ Քրիստոսին: Ինք որ ինքզինք կը ներկայացնէր մէկը որ երբեք չի լքեր իր Վարդապետին, բայց ահա իր ունեցած փորձութիւնը իրեն փութառութիւն մը, որ ինքզինք ճանչնայ, ճանչնայ նաեւ Չարին գործելակերպը: Նաեւ Աստուծոյ պարագային, այս անգամ Դաւիթ, իր կեանքի փորձառութիւնը որպէս հովիւ, Աստուծոյ մէջ փեսնելու հովիւի պարկերը: Այդպէս է նաեւ, երբ մեր կեանքի փորձառութեան լոյսին փակ, նայած ինչպիսին է եղած մեր կապը մեր ծնողներուն հետ, յաճախ այդպէս ալ կը փորձենք փեսնել զԱստուծ: Չերկարելու համար, ահա Դաւիթ կարծէք կը կանխէ, նախապարկերը կու փայ, այն խօսքին, այն արքայապարտութեան, երբ Յիսուս առիծով մը պիտի արքայապարտի ըսելով. «Ես եմ ճշմարիտ հովիւր, որ իր կեանքը կու փայ իր ոչխարներուն համար» Յովի 10:11:

«Ուստի բանի մը կարօտ պիտի չըլլամ»: Այնպէս ինչպէս ոչխարը երբ իրաւ ու ճշմարիտ հովիւին հոգածութեան փակ է, հանգիստ ու ապահով է, ու փակաւին չըսելու համար, անհոգ: Ինչպէս Քրիստոս պիտի ըսէ, «Հոգ մի ընէք վաղուան համար»: Այո, երբ է որ կրնանք հոգ չընէլ: Երբ որ առողջ ենք, երբ որ բաւարար դրամ ունինք, երբ որ պայմանները լաւ են: Հապա, երբ այս բոլորը չկան ու չըլլան, ուրեմն հոգ պիտի ընենք: Հոգ չենք ըներ երբոր ունինք վստահութիւնը թէ Տէրն է մեր հովիւր, եւ ահա այն սրբէն է որ բանի մը կարօտ պիտի չըլլանք: Այսինքն, այն ինչ բանի որ կարիք ունինք, Տէրը պիտի մարակարարէ: Դարձեալ Քրիստոս կը յիշեցնէր ըսելով. «Եթէ դուք որ չար էք, եւ գիպէք բարի բաներ փայ ձեր զաւակներուն, որքան առաւել ձեր երկնաւոր Հայրը, երբ խնդրէք Իրմէ»: Ամբողջական վստայութեան, Անոր ապահովելու արքայապարտիւնն է: Եսայի մարգարտութեան մէջ Տէրը նոյնպէս կ'արքայապարտի ըսելով. «Հովիւի մը պէս պիտի կերակրէ Իր հօտը, պիտի հաւաքէ Իր գառները, եւ հեզութեամբ պիտի առաջնորդէ զիրենք» 40:11:

«Զիս դալար արօքավայրերու մէջ կ'առաջնորդէ»: Ինք, Դաւիթ իր ոչխարները ո՛ր կը փաներ երբ անոնց կեր պիտի ապահովէր, եթէ ոչ դալար արօքավայրեր, որպէսզի այնպէս ոչ միայն ուրեմն, այլ՝ նաեւ աճէին, մեծնային: Ահա նոյն վստահութեամբ ալ Դաւիթ ինքզինք կը փեսնէ, որ Աստուծ գինք կ'առաջնորդէ այդպիսի վայրերու մէջ, ոչ միայն ուրեմն, սնունդ, առօրեայ պէքեր ապահովելու համար, այլ՝ աւելին, մեծնալու, հասունանալու, աճելու հոգեւորապէս, նմանելու Իրեն: Ինչպէս նաեւ «հանգստարար ջուրերուն քով», որոնք խաղաղութիւն կու փան: Յաճախ մեր հետքոյ կեանքին մէջ փեղեր կը փնտրենք, ուր քիչ մը հանգստանալու, պահ մը կորուելու առօրեայէն, բայց դարձեալ պիտի վերադառնանք մեր առօրեային: Նոյն մտահոգութիւններուն: Բայց երբ Աստուծոյ վստահած ենք, երբ Անոր յանձնուած ենք, այնպէս ինչպէս հօտը հովիւին, ահա այն սրբէն նոյնիսկ դժուարին պայմաններուն մէջ իսկ ներքին խաղաղութիւն եւ հանգստութիւն մը ունինք, որ կը փրոյ մեզի:

«Հոգիս կը նորոգէ, արդարութեան ճամբաներէն կ'առաջնորդէ ինձի»: Ահա այդ դալար արօքավայրերուն եւ հանգստարար շուրերուն քով երթալու արդիւնքն է որ կը ներկայացնէ: Աստուծոյ առաջնորդութեան փակ եղողը, նաեւ հոգիի նորոգութիւն է որ կը ստանայ, եւ առաւել եւս արդարութեան ճամբաներէն կ'առաջնորդուի: Յաճախ առօրեայ կեանքի դժուարութիւնները կրնան մեր սրտերը, հոգիները խռովեցնել, յուսահատութեան պահեր ունենալ, ո՛վ է մեզ մխիթարողը, ո՛վ է մեր հոգիները վերանորոգողը, եթէ ոչ՝ ճշմարիտ Հովիւր, Տէրը, Յիսուս Քրիստոս, դրկելով Իր Սուրբ Հոգին, որ մեզ պիտի մխիթարէ: Բայց երբ է որ այս բոլորը կրնանք զգալ, երբ ամբողջութեամբ Իրեն կը յանձնուինք: Առաւել եւս, փակաւին, Ինք պատրաստ է իջնելու, ըլլալու հոն ուր որ մենք կորսուած վիճակի մէջ ենք: Յիշենք Քրիստոսի խօսքը. «Երբ մէկը հարիւր ոչխար ունի, մէկը կորսուի, իննիսուն ինն մէկը կողմ կը ձգէ, կ'իջնէ կորսուածը փնտրելու եւ գտնելու»: Ահա այս խօսքերը ապահովութիւն կու տան եւ վստահութիւն, որ մեր կորսուած մէկ պահուն, Տէրը, մեր Հովիւր, դիպողի դերին մէջ չէ, այլ՝ գործնական, իջնելու եւ մեզ ազատելու, փրկելու: Այո, ոչխարի պէս, մենք ալ յաճախ ասդին անդին կը մոլորինք, հաճոյք, ուրախութիւն, ցնծութիւն կը փնտրենք Աստուծմէ հեռու, Անկէ դուրս, եւ կ'ինանք չարին թակարդը: Ահա Աստուծոյ ներգործութիւնը իջնելու եւ մեզ վերստին գտնելու եւ Իր ուսերուն վրայ առնելով մեզ վերադարձնելու, որ կը կոչուի դարձ, ապաշխարութիւն: Եւ այս բոլորը, Իր անուան համար, որպէս ձրի պարգեւ:

«Նոյնիսկ մահուան շուքի ձորին մէջէն պարզփիմ, չարէն պիտի չվախնամ»: Այո, Աստուծոյ հետ ըլլալը, երբեք չի նշանակեր դժուարութիւն պիտի չունենանք, չի նշանակեր փորձութիւններու մէջէն պիտի չհանցնինք, այլ՝ նոյնիսկ եթէ անցնինք, Դաւիթ կ'ըսէ. «Չարէն չեմ վախնար, պիտի չվախնամ», ինչո՞ւ, ի՞նչ է գաղտնիքը, «Որովհետեւ Դուն ինձի հետ ես, Քու ցուպդ զիս կ'առաջնորդէ, գաւազանդ զիս կը պաշտպանէ»: Մէկը առաջնորդելու, իսկ միւսը՝ պաշտպանելու: Մենք ընդհանրապէս գիտենք, որ հովիւր մէկ գաւազան կ'ունենայ, այս պարագային, Դաւիթ այդ նոյն գաւազանին մէջ երկու պարկեր կը փակէ, առաջնորդութեան եւ պաշտպանութեան: Այս պարագային ի՞նչն է այդ ցուպն ու գաւազանը, եթէ ոչ Աստուծոյ Խօսքը, ու այդ Խօսքին զօրութիւնը, որ մեզ կ'առաջնորդէ ու կը պաշտպանէ: Մէկ այլ ուրիշ առիթով Դաւիթ պիտի ըսէ. «Խօսքերդ լոյս են ու ճրագ իմ քայլերուս եւ շաւիղներուս»: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Աստուծոյ Խօսքը սպառազինութիւն է, երկսայրի սուր է»:

Տակաւին, ոչ միայն առաջնորդութիւն եւ ապահովութիւն, այլ՝ «սեղան կը պատրաստես թշնամիներուս դիմաց, գլուխս իւղով կ'օծես, բաժակս մինչեւ բերան կը լեցնես»: Աստուծոյ փութ օրհնութիւնները ու բարիքները նոյնիսկ թշնամիներուս ներկայութեան, ուր անոնք իսկ զարմանալով թէ Աստուծոյ ինչպիսի բարիքներով կը լեցնէ կեանքս, առաւել եւս գլուխս իւղով կ'օծէ, Սուրբ Հոգիի օրհնութիւնները, պաշտպանութիւնը:

Դաւիթ փակաւին վստահութիւնը ունի, որ Աստուծոյ բարութիւնը եւ շնորհքը անպակաս պիտի ըլլան: Անգամ մը որ ամբողջութեամբ վստահինք Աստուծոյ, ինք որպէս աղբիւրը, փուխը ամէն բարիքներու, երբեք ալ պիտի չպակսին մեր վրայէն: Եւ կեանքին ամբողջ փութութեան, Աստուծոյ փաճարին մէջ ըլլալու, Անոր ներկայութեան վայելքը ունենալու: Թող այս Սաղմոսը անգամ մը եւս վստահութիւնը փայ մեզի ու ըսենք Դաւիթի նման. «Տէրն է մեր ճշմարիտ Հովիւր»: